

Կ-1056-07.09.2016-SS-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՐԹԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի խնդիրները

Սույն օրենքը սահմանում է ֆինանսական համահարթեցման հասկացությունը, սկզբունքները, համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների (այսուհետ՝ դոտացիաներ) հաշվարկման և հատկացման կարգերը:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

1. Ֆինանսական համահարթեցում՝ համայնքների ներդաշնակ զարգացմանը նպաստելու, ինչպես նաև բոլոր համայնքներում նվազագույն մակարդակի ծախսեր կատարելու հնարավորություն ստեղծելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով վերապահված սեփական լիազորությունների իրականացման համար համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերությունների նվազեցումն է:
2. Համայնքի բյուջետային ապահովվածության գործակից՝ համայնքի եկամտային կարողության և ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցների հարաբերությունն է:
3. Համայնքի եկամտային կարողության գործակից՝ համայնքի բնակչության մեկ շնչին ընկնող եկամտային կարողության հարաբերությունն է ՀՀ համանման ցուցանիշին:
4. Համայնքի եկամտային կարողություն՝ համայնքի բյուջեին օրենքով ամրագրված և սույն օրենքի շրջանակներում նախատեսված հողի հարկի, գույքահարկի, մասհանվող հարկերի, պետական տուրքերի և “ա” մասով հատկացվող դոտացիաների հանրագումարն է:
5. Համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակից՝ տվյալ համայնքի սեփական լիազորությունների իրականացման ծախսերի վրա ազդեցություն ունեցող՝ սույն օրենքով սահմանված ծախսային գործոնների արժեքների հանրագումարն է:
6. Ծախսային գործոններ՝ համայնքներին օրենքով վերապահված սեփական լիազորությունների իրականացման վրա ազդեցություն ունեցող և տվյալ համայնքի առանձնահատկությունները բնութագրող գործոններ են: Սույն օրենքում ընդգրկված են հետևյալ ծախսային գործոնները՝
 - 1) մասշտաբի գործոն.
 - 2) տրանսպորտային մատչելիության գործոն.

- 3) համայնքի բարձրադիրության գործոն.
 - 4) համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործոն.
 - 5) բնակչության տարիքային կառուցվածքի գործոն:
7. Համահարթեցման սահմանային մակարդակ՝ այս ցուցանիշի արժեքով է պայմանավորված, սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դոտացիաների “բ” մասի՝ ըստ համայնքների հատկացման չափը, ինչպես նաև նույն մասով համայնքների դոտացիա ստանալու կամ չստանալու հնարավորությունը:
 8. Սույն օրենքի իմաստով դոտացիաների գումարները հաշվարկելու համար պետական լիազոր մարմինն է (այսուհետ՝ պետական լիազոր մարմին) տարածքային կառավարման և զարգացման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:
 9. Սույն օրենքի իմաստով հաշվարկվող տարին այն տարին է, որի համար հաշվարկվում են դոտացիաները:

Հոդված 3. Ֆինանսական համահարթեցման սկզբունքները

Ֆինանսական համահարթեցման սկզբունքներն են՝

1. Համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա անհամաչափության մեղմացումը.
2. Պետական բյուջեից համայնքներին տրամադրվող դոտացիաների անհատույց և ոչ նպատակային լինելը.
3. Համայնքների լիազորությունների իրականացման և ֆինանսական միջոցների օգտագործման ազատության և ինքնուրույնության պահպանումը.
4. Պետական բյուջեից տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարի նվազագույն չափի՝ օրենքով սահմանումը.
5. Ըստ առանձին համայնքների՝ սույն օրենքով սահմանված կարգով պետական բյուջեից համայնքներին տրամադրող դոտացիաների գումարների՝ «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատումը:

Հոդված 4. Դոտացիաների ձևավորման աղբյուրը և դոտացիա ստացող համայնքները

1. Դոտացիաների ֆինանսական միջոցները ձևավորվում են պետական բյուջեի միջոցներից և հանդիսանում են համայնքների բյուջեներին հատկացվող ոչ նպատակային պետական ընթացիկ տրանսֆերտներ:
2. Դոտացիաներ ստացող համայնքների համար պահպանվում են սեփական պատասխանատվությամբ գործելու իրավունքը և այդ ֆինանսական միջոցների օգտագործման ազատությունը:
3. Սույն օրենքով սահմանված ֆինանսական միջոցների բաշխման կարգի հիման վրա դոտացիաներ չեն կարող ստանալ այն համայնքները, որոնք չեն բավարարում սույն օրենքի 6-րդ և (կամ) 7-րդ հոդվածներով նախատեսված պահանջները:

Հոդված 5. Դոտացիաների կառուցվածքը

Դոտացիաները բաղկացած են երկու մասից՝ “ա” և “բ”։ Այդ մասերից յուրաքանչյուրը հաշվարկվում է ըստ առանձին համայնքների։

“ա” մասով դոտացիաները հաշվարկվում են ըստ համայնքների բնակչության թվաքանակի - Γ^a ,

“բ” մասով դոտացիաները հաշվարկվում են ըստ համայնքների բյուջետային ապահովվածության գործակցի - Γ^b ։

Հոդված 6. Դոտացիաների “ա” մասի հաշվարկման կարգը

1. “ա” մասով դոտացիաներ հատկացվում են այն համայնքներին, որոնց բնակչության թվաքանակը չի գերազանցում 3500-ը։
2. “ա” մասով յուրաքանչյուր համայնքին դոտացիաները հատկացվում են հավասարաչափ գումարով, որի չափը սահմանվում է տվյալ տարվա «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով։
3. Համայնքի բնակչության թվաքանակը տվյալ համայնքի տարածքում հաշվառված բնակչության թիվն է՝ հաշվարկվող տարվան նախորդող տարվա տարեսկզբի (հունվարի 1-ի) դրությամբ։
4. “ա” մասով հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով։

$$\Gamma^a = \text{ՀԹ}^a \times \text{Ա}^a, \text{ որտեղ՝}$$

Γ^a - “ա” մասով հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարն է,

ՀԹ^a - “ա” մասով դոտացիա ստացող համայնքների ընդհանուր թիվն է,

Ա^a - “ա” մասով մեկ համայնքին հատկացվող դոտացիայի գումարի չափն է։

5. Համայնքի դոտացիա ստանալը “ա” մասով, չի բացառում նույն համայնքի դոտացիա ստանալը նաև “բ” մասով։ “ա” մասով հատկացվող դոտացիաների միջոցները ներառվում են այդ միջոցները ստացող համայնքների եկամտային կարողության գործակցի հաշվարկի մեջ՝ որպես լրացուցիչ եկամուտ։

Հոդված 7. Դոտացիաների “բ” մասի հաշվարկման կարգը

1. “բ” մասով դոտացիաներ ստանում են բոլոր այն համայնքները, որոնց բյուջետային ապահովվածության գործակիցը փոքր է սույն օրենքով սահմանված՝ համահարթեցման սահմանային մակարդակի արժեքից։
2. “բ” մասով հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\Gamma^b = \Gamma - \Gamma^a, \text{ որտեղ՝}$$

Γ^b - “բ” մասով հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարն է,

Γ - դոտացիաների ընդհանուր գումարն է,

Γ^a - “ա” մասով հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարն է։

3. Սույն օրենքով սահմանվում է համահարթեցման սահմանային մակարդակի այնպիսի արժեք, որի դեպքում "բ" մասով հատկացվող դոտացիայի ֆինանսական միջոցները կարող են լրացնել դոտացիա ստացող համայնքների բյուջետային ապահովվածության և համահարթեցման սահմանային մակարդակի միջև եղած տարբերության 75 տոկոսը:
4. Համայնքին "բ" մասով հատկացվող դոտացիան հավասար է տվյալ համայնքի բյուջետային ապահովվածության և համահարթեցման սահմանային մակարդակի միջև եղած տարբերության 75 տոկոսին:
5. Համայնքի բյուջետային ապահովվածության և համահարթեցման սահմանային մակարդակի միջև եղած տարբերության գումարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\mathbf{ԳՈՒՄ}_i^{^{ՀՍՄ}} = (\mathbf{ՀՍՄ} - \mathbf{ԲԱԳ}_i) \times \mathbf{Բ}_i \times \mathbf{ԾԿԳ}_i \times \mathbf{ԵԿ}_{միջին}, \text{ որտեղ՝}$$

- ԳՈՒՄ**_i^{ՀՍՄ} - i-րդ համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի և համահարթեցման սահմանային մակարդակի միջև եղած տարբերությունը լրացնելու համար անհրաժեշտ գումարի չափն է,
- ՀՍՄ** - համահարթեցման սահմանային մակարդակն է,
- ԾԿԳ**_i - i-րդ համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցն է,
- Բ**_i - i-րդ համայնքի բնակչության թիվն է,
- ԵԿ**_{միջին} - համայնքների միջին եկամտային կարողությունն է,

$$\mathbf{ԵԿ}_{միջին} = \mathbf{\Sigma ԵԿ}_i / \mathbf{Բ} \ll , \text{ որտեղ՝}$$

- ԵԿ**_i - i-րդ համայնքի եկամտային կարողությունն է,
- Բ** << - բոլոր համայնքների բնակչության թվի հանրագումարն է (<< բնակչության թիվը):

6. Համայնքներին "բ" մասով հատկացվող դոտացիաները հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝

$$\mathbf{Դ}_i^{\mathbf{Բ}} = \mathbf{0,75} \times \mathbf{ԳՈՒՄ}_i^{^{ՀՍՄ}}, \text{ որտեղ՝}$$

- Դ**_i^Բ - i-րդ համայնքին "բ" մասով հատկացվող դոտացիայի գումարն է:

Հոդված 8. Համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի հաշվարկման կարգը

Համայնքի բյուջետային ապահովվածության գործակիցը համայնքի եկամտային կարողության և ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցների հարաբերությունն է:

Համայնքի բյուջետային ապահովվածության գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\mathbf{ԲԱԳ}_i = \mathbf{ԵԿԳ}_i / \mathbf{ԾԿԳ}_i , \text{ որտեղ՝}$$

- ԲԱԳ**_i - i-րդ համայնքի բյուջետային ապահովվածության գործակիցն է,
- ԵԿԳ**_i - i-րդ համայնքի եկամտային կարողության գործակիցն է,
- ԾԿԳ**_i - i-րդ համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցն է:

Հողված 9. Համայնքի եկամտային կարողության գործակցի հաշվարկման կարգը

1. Համայնքի եկամտային կարողության գործակցը՝ տվյալ համայնքի բնակչության մեկ շնչին ընկնող՝ համայնքների բյուջեներին օրենքով ամրագրված տվյալ համայնքի հարկային եկամուտների, պետական տուրքերի և սույն օրենքով նախատեսված “ա” մասով հատկացվող դոտացիաների հանրագումարն է՝ հարաբերած միջին հանրապետական համանման ցուցանիշին:
2. Համայնքի եկամտային կարողությունը տվյալ համայնքի բյուջեին օրենքով ամրագրված և սույն օրենքի շրջանակներում նախատեսված, հետևյալ եկամտատեսակների հանրագումարն է՝
 - 1) Հողի հարկ.
 - 2) Գույքահարկ.

Համայնքի հողի հարկի և գույքահարկի հաշվարկային գումարի ցուցանիշները յուրաքանչյուր համայնքի գծով օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված՝ հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարում այդ համայնքի բյուջե վճարման ենթակա հողի հարկի և գույքահարկի տարեկան գումարներն են (առանց հողի հարկի և գույքահարկի գծով՝ հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարվա տարեսկզբի (հունվարի 1-ի) դրությամբ առկա չմարված ապառքների, տույժերի և տուգանքների, ինչպես նաև հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարվա ընթացքում հաշվարկված տույժերի և տուգանքների գումարների), ավելացված Հայաստանի Հանրապետության օրենքներով և համայնքների ավագանիների կողմից ընդունված որոշումներով ֆիզիկական անձանց և կազմակերպություններին հողի հարկի և գույքահարկի գծով արտոնությունների տրամադրման հետևանքով՝ այդ հարկերի գծով համայնքների հաշվարկային տարվան նախորդող երկրորդ տարվա բյուջեներում եկամուտների կորուստների գումարները.

3) Մասհանվող հարկեր.

Մասհանվող հարկերի հաշվարկային գումարի ցուցանիշները յուրաքանչյուր համայնքի գծով հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարում այդ համայնքի բյուջե փաստացի վճարված մասհանվող հարկերի տարեկան գումարներն են (մասհանվող հարկերի տեսակները և մասհանման տոկոսաչափը սահմանվում է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով).

4) Պետական տուրքեր.

Պետական տուրքերի հաշվարկային գումարի ցուցանիշները յուրաքանչյուր համայնքի գծով հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարում այդ համայնքի բյուջե փաստացի վճարված պետական տուրքերի տարեկան գումարներն են:

5) “ա” մասով հատկացվող դոտացիա.

“ա” մասով հատկացող դոտացիայի հաշվարկային գումարի ցուցանիշը յուրաքանչյուր համայնքի գծով հաշվարկվող տարում, սույն օրենքով նախատեսված կարգով հաշվարկվող, “ա” մասով հատկացվող դոտացիայի գումարն է:

3. Համայնքի եկամտային կարողությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ԵԿ_i = ՀՀ_i + ԳԿ_i + ՄԿ_i + ՊՏ_i + Ա^?, \text{ որտեղ՝}$$

- ՀՀ_i - i-րդ համայնքի հողի հարկի գումարն է,
ԳԿ_i - i-րդ համայնքի գույքահարկի գումարն է,
ՄԿ_i - i-րդ համայնքի մասհանվող հարկերն են,
ՊՏ_i - i-րդ համայնքի պետական տուրքերն են,

Ա՞ - “ա” մասով մեկ համայնքին հատկացվող դոտացիայի գումարի չափն է:

4. Համայնքի եկամտային կարողության գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ԵԿԳ_i = (ԵԿ_i / Բ_i) / (ԵԿ_{<<} / Բ_{<<}), \text{ որտեղ՝}$$

- ԵԿԳ_i - i-րդ համայնքի եկամտային կարողության գործակիցն է,
ԵԿ_i - i-րդ համայնքի եկամտային կարողությունն է,
Բ_i - i-րդ համայնքի բնակչության թիվն է,
ԵԿ_{<<} - բոլոր համայնքների եկամտային կարողության հանրագումարն է,
Բ_{<<} - բոլոր համայնքների բնակչության թվի հանրագումարն է (<< բնակչության թիվը):

Հոդված 10. Համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցը

1. Համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցը (այսուհետ ծախսային գործակից) տվյալ համայնքի սեփական լիազորությունների իրականացման ծախսերի վրա ազդեցություն ունեցող՝ սույն օրենքով սահմանված ծախսային գործոնների արժեքների հանրագումարն է:
2. Ծախսային գործակիցն ուղղակիորեն կապված է՝
 - 1) կիրառվող ծախսային գործոնների տեսակից և դրանց արժեքից,
 - 2) համայնքի ծախսային գործակցում յուրաքանչյուր ծախսային գործոնի տեսակարար կշռից (բաժնեմասից):
3. Համայնքների առանձնահատկություններից ելնելով՝ սույն օրենքում կիրառվում են ծախսային գործակցի վրա ազդեցություն ունեցող այնպիսի ծախսային գործոններ, որոնք հիմնականում ընդհանուր են և ուղղակիորեն ազդում են համայնքային լիազորությունների իրականացման ծախսերի վրա, և դրանց վերաբերյալ տվյալները չափելի, մատչելի և հավաստի են:
4. Համայնքի ծախսային գործակիցը հաշվարկվում է սույն օրենքով սահմանված հետևյալ ծախսային գործոններով և իրենց համապատասխան տեսակարար կշիռներով՝
 - 1) Մասշտաբի ծախսային գործոն՝ Կ^{ՄԳ} - 30 տոկոս.
 - 2) Տրանսպորտային մատչելիության ծախսային գործոն՝ Կ^{ՏՄԳ} - 20 տոկոս.
 - 3) Համայնքի բարձրադիրության ծախսային գործոն՝ Կ^{ԲԳ} - 15 տոկոս.
 - 4) Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ծախսային գործոն՝ Կ^{ԲԲԳ} - 25 տոկոս.
 - 5) Բնակչության տարիքային կառուցվածքի ծախսային գործոն՝ Կ^{ԲՏԿԳ} - 10 տոկոս:

Հոդված 11. Մասշտաբի ծախսային գործոնի հաշվարկման կարգը

1. Մասշտաբի ծախսային գործոնը համայնքի սեփական լիազորությունների իրականացման ծախսերի վրա համայնքի բնակչության թվաքանակի ազդեցությունն է:
2. Մասշտաբի ծախսային գործոնի արժեքը հաշվարկվում է ըստ համայնքի բնակչության թվաքանակի՝ համաձայն հետևյալ սանդղակի.

Բնակչության թվաքանակի միջակայք	ՄԳ _i
0-3500 բնակիչ	1.0
3501-5000 բնակիչ	2.8
5001-20000 բնակիչ	2.0
20001-150000 բնակիչ	1.5
150001-ից ավելի բնակիչ	1.0

որտեղ՝

ՄԳ_i - i-րդ համայնքի մասշտաբի ծախսային գործոնի արժեքն է:

Հոդված 12. Տրանսպորտային մատչելիության ծախսային գործոնի հաշվարկման կարգը

1. Տրանսպորտային մատչելիության ծախսային գործոնը համայնքի սեփական լիազորությունների իրականացման ծախսերի վրա նախկին շրջկենտրոնից, մարզկենտրոնից և Երևանից համայնքի հեռավորության ազդեցությունն է:
2. Տրանսպորտային մատչելիության ծախսային գործոնի արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$SUԳ_i = 1 + (0,1 \times \zeta_i^{Մայր} + 0,3 \times \zeta_i^{Մարզ} + 0,6 \times \zeta_i^{Շրջ}) / (0,1 \times \zeta_{միջ}^{Մայր} + 0,3 \times \zeta_{միջ}^{Մարզ} + 0,6 \times \zeta_{միջ}^{Շրջ}), \text{ որտեղ՝}$$

SUԳ_i - i-րդ համայնքի տրանսպորտային մատչելիության ծախսային գործոնի արժեքն է,

$\zeta_i^{Մայր}$ - i-րդ համայնքի հեռավորությունն է մայրաքաղաքից,

$\zeta_i^{Մարզ}$ - i-րդ համայնքի հեռավորությունն է մարզկենտրոնից,

$\zeta_i^{Շրջ}$ - i-րդ համայնքի հեռավորությունն է նախկին շրջկենտրոնից,

$\zeta_{միջ}^{Մայր}$ - բոլոր համայնքների միջին հեռավորությունն է մայրաքաղաքից,

$$\zeta_{միջ}^{Մայր} = \sum_i \zeta_i^{Մայր} / \zeta_{\Theta} <<, \text{ որտեղ՝}$$

$\sum_i \zeta_i^{Մայր}$ - բոլոր համայնքների՝ մայրաքաղաքից ունեցած հեռավորությունների հանրագումարն է,

$\zeta_{\Theta} <<$ - համայնքների ընդհանուր թիվն է,

$\zeta_{միջ}^{Մարզ}$ - բոլոր համայնքների միջին հեռավորությունն է իրենց մարզկենտրոնից,

$$\zeta_{միջ}^{Մարզ} = \sum_i \zeta_i^{Մարզ} / \zeta_{\Theta} <<, \text{ որտեղ՝}$$

$\sum_i \zeta_i^{Մարզ}$ - բոլոր համայնքների՝ իրենց մարզի մարզկենտրոնից ունեցած հեռավորությունների հանրագումարն է,

$\zeta_{միջ}^{Շրջ}$ - բոլոր համայնքների միջին հեռավորությունն է իրենց նախկին շրջկենտրոնից,

$\sum_{i=1}^n C_i^{CP2} = \sum_i C_i^{CP2} / \text{ՀԹ}_{CC}$, որտեղ՝
 $\sum_i C_i^{CP2}$ - բոլոր համայնքների՝ իրենց նախկին շրջկենտրոնից ունեցած հեռավորությունների հանրագումարն է:

Հոդված 13. Համայնքի բարձրադիրության ծախսային գործոնի հաշվարկման կարգը

1. Համայնքի բարձրադիրության ծախսային գործոնը համայնքի սեփական լիազորությունների իրականացման ծախսերի վրա համայնքի բարձրադիրության ազդեցությունն է:
2. Համայնքի բարձրադիրության ծախսային գործոնի արժեքը հաշվարկվում է ըստ համայնքի բարձրադիրության նիշի, համաձայն հետևյալ սանդղակի.

Համայնքի բարձրադիրության նիշի միջակայք	ԲԳ _i
մինչև 1700մ	1,0
1700-2000մ	1,1
2000մ -ից ավել	1,25

որտեղ,

ԲԳ_i - i-րդ համայնքի բարձրադիրության ծախսային գործոնի արժեքն է:

3. Համայնքի բարձրադիրության նիշի ցուցանիշը՝ համայնքի կենտրոն հանդիսացող բնակավայրում տեղական ինքնակառավարման մարմինների նստավայրի՝ ծովի մակերևույթից ունեցած բարձրությունն է:

Հոդված 14. Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ծախսային գործոնի հաշվարկման կարգը

1. Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ծախսային գործոնը համայնքի սեփական լիազորությունների իրականացման ծախսերի վրա համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ազդեցությունն է:
2. Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ծախսային գործոնի արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$\text{ԲԲԳ}_i = 1 + 0,2(\text{ԲԹ}_i - 1)$, որտեղ՝

ԲԲԳ_i - i-րդ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ծախսային գործոնի արժեքն է,

ԲԹ_i - i-րդ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի թիվն է:

Հոդված 15. Բնակչության տարիքային կառուցվածքի ծախսային գործոնի հաշվարկման կարգը

1. Բնակչության տարիքային կառուցվածքի ծախսային գործոնը համայնքի սեփական լիազորությունների իրականացման ծախսերի վրա համայնքի բնակչության տարիքային կառուցվածքի ազդեցությունն է:

2. Բնակչության տարիքային կառուցվածքի ծախսային գործոնի արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ԲՏԿԳ_i = 1 + (P_i^b + P_i^o) / P_i) / (P_{<<^b} + P_{<<^o}) / P_{<<}) , \text{ որտեղ՝}$$

ԲՏԿԳ_i - i-րդ համայնքի բնակչության տարիքային կառուցվածքի գործակիցն է,

P_i^b - i-րդ համայնքի 0-16 տարեկան բնակչության թիվն է,

P_i^o - i-րդ համայնքի կենսաթոշակային տարիքի (63 տարեկանից բարձր) բնակչության թիվն է,

P_i - i-րդ համայնքի բնակչության թիվն է,

P_{<<^b} - բոլոր համայնքների՝ 0-16 տարեկան բնակչության թվի հանրագումարն է,

P_{<<^o} - բոլոր համայնքների՝ կենսաթոշակային տարիքի (63 տարեկանից բարձր) բնակչության թվի հանրագումարն է,

P_{<<} - բոլոր համայնքների բնակչության թվի հանրագումարն է (<< բնակչության թիվը):

Հոդված 16. Համայնքի ծախսային գործակցի հաշվարկման բանաձևը

1. Համայնքի ծախսային գործակիցը հավասար է մասշտաբի, տրանսպորտային մատչելիության, համայնքի բարձրադիրության, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի, բնակչության տարիքային կառուցվածքի ծախսային գործոնների հանրագումարին՝ իրենց համապատասխան տեսակարար կշիռներով:
2. Համայնքի ծախսային գործակցի հաշվարկային արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ԾԿԳ}_i^{\text{հաշ.}} = \sum(Y^n \times \text{ԾԳ}_i^n), \text{ որտեղ՝}$$

ԾԿԳ_i^{հաշ.} - i-րդ համայնքի ծախսային գործակցի հաշվարկային արժեքն է,

Yⁿ - n - րդ ծախսային գործոնի տեսակարար կշիռն է,

ԾԳ_iⁿ - i-րդ համայնքի n - րդ ծախսային գործոնի արժեքն է:

$$\text{ԾԿԳ}_i^{\text{հաշ.}} = Y^{\text{ՄԳ}} \times \text{ՄԳ}_i + Y^{\text{ՏՄԳ}} \times \text{ՏՄԳ}_i + Y^{\text{ԲԳ}} \times \text{ԲԳ}_i + Y^{\text{ԲԲԳ}} \times \text{ԲԲԳ}_i + Y^{\text{ԲՏԿԳ}} \times \text{ԲՏԿԳ}_i$$

$$\text{ԾԿԳ}_i^{\text{հաշ.}} = 0.3 \times \text{ՄԳ}_i + 0.2 \times \text{ՏՄԳ}_i + 0.15 \times \text{ԲԳ}_i + 0.25 \times \text{ԲԲԳ}_i + 0.1 \times \text{ԲՏԿԳ}_i$$

3. Համայնքի ծախսային գործակիցը համայնքի ծախսային գործակցի հաշվարկային արժեքի նորմավորված ցուցանիշն է: Համայնքի ծախսային գործակցի հաշվարկային արժեքը նորմավորվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ԾԿԳ}_i = \text{ԾԿԳ}_i^{\text{հաշ.}} / \text{ԾԿԳ}^{\text{միջին}} , \text{ որտեղ՝}$$

ԾԿԳ_i - i-րդ համայնքի ծախսային գործակցի նորմավորված ցուցանիշն է (համայնքի ծախսային գործակից),

ԾԿԳ^{միջին} - բոլոր համայնքների ծախսային գործակիցների միջին կշռված ցուցանիշն է,

$$\text{ԾԿԳ}^{\text{միջին}} = \sum (\text{ԾԿԳ}_i^{\text{հաշ}} \times \text{Բ}_i) / \text{Բ} \ll$$

Հոդված 17. Դոտացիաների հաշվարկների կատարումը և հատկացումը

1. Դոտացիաների հաշվարկման մեջ օգտագործվող՝ համայնքներին վերաբերող տվյալների աղբյուրներն են՝
 - 1) ծախսային գործակիցների տվյալների համար՝ ՀՀ ոստիկանությունը, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում պետական լիազոր մարմինը, ՀՀ մարզպետարանները և ՀՀ համայնքները,
 - 2) եկամտային կարողության տվյալների համար՝ համայնքներն ու հարկային մարմինը՝ յուրաքանչյուրն իր մասով:
2. Համայնքներին հատկացվող դոտացիաների գումարները հաստատվում են յուրաքանչյուր տարվա «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով:
3. Պետական լիազոր մարմինը բյուջետային օրենսդրությամբ սահմանված ժամկետներում իր պաշտոնական վեբ-կայքում հրապարակում և տարածքային կառավարման մարմինների միջոցով տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրում է պետական մարմինների կողմից հաշվառվող՝ դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառված ելակետային տվյալների ցուցանիշները:
4. Դոտացիաների գումարների հաշվարկման համար անհրաժեշտ ելակետային տվյալները պետական լիազորած մարմին ներկայացման, դոտացիաների հաշվարկման և հատկացման բնագավառում պետության և համայնքների միջև առաջացող, սույն օրենքով չկարգավորված հարաբերությունները կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության բյուջետային օրենսդրությամբ:
5. Տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց համայնքներին հատկացված դոտացիայի գումարի չափը և հաշվարկներում օգտագործվող ելակետային տվյալների իսկությունը կարող են վիճարկել Հայաստանի պետական լիազորած մարմնում և (կամ) դատարանում:
6. Համայնքներին դոտացիաները հատկացվում են հավասար չափաբաժիններով յուրաքանչյուր ամսվա վերջում, պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից՝ յուրաքանչյուր համայնքի համար բացված գանձապետական հաշվի միջոցով:

Հոդված 18. Անցումային և եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքի 6-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում և կիրառվում դոտացիաների՝ 2020 թվականի գումարները հաշվարկելու պահից սկսած:
2. 2017, 2018 և 2019 թվականներին «ա» մասով յուրաքանչյուր համայնքին դոտացիաները հատկացվում են՝
 - 1) Տվյալ համայնքին 2016 թվականին տրամադրված դոտացիաների փաստացի գումարի չափով (առանց Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման գումարի):

2) 2016-2019 թվականներին ձևավորված բազմաբնակավայր համայնքների «ա» գործոնով նախատեսվող դոտացիայի գումարը հավասար է 2016 թվականի դրությամբ վերջիններիս կազմում ընդգրկված նախկին համայնքների դոտացիաների (առանց Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման գումարի) հանրագումարին:

3. 2017, 2018 և 2019 թվականների համար «ա» մասով հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Դ^u = Դ^{2016 \text{ փաստացի}}, \text{ որտեղ՝}$$

$Դ^u$ - «ա» մասով հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարն է.

$Դ^{2016 \text{ փաստացի}}$ - 2016 թվականին համայնքների փաստացի հատկացված դոտացիաների (ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման գումարի) ընդհանուր գումարն է:

4. 2017, 2018 և 2019 թվականների համար «բ» մասով հատկացվող համահարթեցման դոտացիաների գումարը հաշվարկելիս համայնքի եկամտային կարողության գործակցի հաշվարկում չի ներառվում «ա» մասով հատկացվող դոտացիաների գումարը: 2017, 2018 և 2019 թվականների համար համայնքի եկամտային կարողությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ԵԿ_i = ՀՀ_i + ԳՀ_i + ՄՀ_i + ՊՏ_i, \text{ որտեղ՝}$$

$ՀՀ_i$ - i-րդ համայնքի հողի հարկի գումարն է,

$ԳՀ_i$ - i-րդ համայնքի գույքահարկի գումարն է,

$ՄՀ_i$ - i-րդ համայնքի մասհանվող հարկերն են,

$ՊՏ_i$ - i-րդ համայնքի պետական տուրքերն են

5. Անկախ սույն օրենքով սահմանված դոտացիայի հաշվարկման կարգից՝ 2017 թ. և հաջորդ տարիներին համայնքներին հատկացվող համահարթեցման դոտացիաները հաշվարկվում և հատկացվում են ոչ պակաս, քան 2016թ փաստացի հատկացված դոտացիաները (ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման գումարի):

6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում՝ պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

7. Ուժը կորցրած ճանաչել 1998 թվականի նոյեմբերի 24-ին ընդունված «Ֆինանսական Համահարթեցման մասին» ՀՕ-262 Հայաստանի Հանրապետության օրենքը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՐԹԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎ « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N	Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խոսրով Հարությունյան	<p align="center">Առաջարկություններ Ֆինանսական համահարթեցման օրենքի նախագծի վերաբերյալ (Կ-1056-7.09.2016-SS-010)</p> <p>1. Նախագծի 2.1 կետը խմբագրել հետևյալ կերպ. «Ֆինանսական համահարթեցում՝ համայնքների ներդաշնակ զարգացմանը նպաստելու նպատակով տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով վերապահված պարտադիր լիազորությունների իրականացումն ապահովելու համար պետական բյուջեից հատկացվող դոտացիաների միջոցով համայնքների եկամտային կարողությունների համալրումն է և այդ կերպ վերջինների մասով համայնքների միջև առկա տարբերությունների հնարավորինս նվազեցումն է»: Այս սահմանման մեջ «պարտադիր լիազորություններ» եզրույթի օգտագործումը համապատասխանում է նաև 2.5 և 2.6 կետերում տրվող սահմանումների բովանդակությանը:</p> <p>2. Առաջարկում եմ «եկամտային ունակություն» տերմինը փոխարինել «եկամտային կարողություն» տերմինով, քանի որ խոսքը գնում է սուբյեկտիվ որևէ գործոնով չպայմանավորված համայնքի եկամտային պոտենցիալի մասին: Մինչդեռ եկամտային ունակություն հասկացությունն ավելի շատ բնորոշում է բյուջետային եկամուտներ ձևավորելու համայնքային իշխանությունների ունակությունը: Համապատասխանաբար նախագծում կիրառվող «ԵՈՒ» ցուցանիշը փոխարինել «ԵԿ» ցուցանիշով, իսկ «ԵՈՒԳ»-ն՝</p>	Առաջարկություններն ընդունվել են մասամբ	Նախագծում մասնավորապես «եկամտային ունակություն» բառերը փոխարինվել են «եկամտային կարողություն» բառերով, և ըստ այդմ էլ համապատասխանաբար բոլոր հաշվարկային

	<p>«ԵԿԳ»-ով:</p> <p>3. Համայնքի եկամտային ունակությունը սահմանվում է որպես հողի հարկի, գույքահարկի, պետական բյուջե մուտքագրվող հարկատեսակներից համայնքային բյուջե կատարվող մասհանումների, պետական տուրքերի և «ա» մասի դոտացիաների հանրագումար: Այս սահմանումը հարուցում է որոշ հարցեր, որոնք կարող են շփոթություն առաջացնել: Դրանք են՝</p> <p>ա) պետական բյուջե մուտքագրվող հարկատեսակներից համայնքային բյուջեներ մասհանումներ կարող են կատարվել, եթե դա նախատեսված է տվյալ ֆինանսական տարվա համար ընդունված պետական բյուջեի մասին օրենքով: Հետևաբար այն արդյունք է կառավարության կողմից իրականացվող բյուջետային քաղաքականության, ինչը կարող է ժամանակի ընթացքում փոփոխվել: Դրա հետ մեկտեղ համայնքի եկամտային կարողությունը չի կարող դիտարկվել որպես պետական բյուջե նախատեսված մուտքերի մի մասի հաշվին ձևավորվող ֆինանսական հնարավորություն:</p> <p>Կարծում եմ պետական բյուջե մուտքագրվող հարկատեսակներից մասհանումները համայնքային բյուջեներ կարելի կլիներ որակել որպես համայնքների եկամտային կարողությունը ձևավորող գործոն միայն այն հարկատեսակների մասով, որոնք ձևավորվում են համայնքի վարչական սահմաններում գործող ընկերությունների, անհատ ձեռներեցների և ֆիզիկական անձանց գործունեության արդյունքում (օրինակ համայնքի սահմաններում ձևավորվող շահութահարկը, եկամտային հարկը, կարելի է քննարկման առարկա դարձնել նաև տվյալ համայնքում ձևավորվող արտոնագրային հարկի կամ շրջանառության հարկի շահութահարկի մասնաբաժինը) և այն դեպքում, երբ այդ մասհանումները ամրագրված են այդ հարկատեսակների մասին օրենքներով կամ հարկային օրենսգրքով և հետևաբար ենթակա չեն կառավարության բյուջետային քաղաքականության ընթացիկ փոփոխություններին,</p> <p>բ) հասկանալի չէ, թե ինչու՞ համայնքի եկամտային կարողության գնահատման մեջ ընդգրկված չեն տեղական տուրքերը:</p> <p>Այս խառնաշփոթը կարող էր վերանալ, եթե օրենքի նախագծով սահմանվեր համայնքի «եկամտային կարողություն» հասկացությունը:</p> <p>Առաջարկում եմ հողված 2-ում ավելացնել նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ.</p>	<p>բանաձևերի հապավումն երում «ԵՈԻ» տառերը փոխարինվել է «ԵԿ» տառերով: Ինչ վերաբերում է բազմիցս նշված «պարտադիր լիազորությունների» հասկացությանը, ապա այն խմբագրվել է ՀՀ Սահմանադրության 182-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան, և նախագծում փոխարինվել</p>
--	---	--

<p>Համայնքի եկամտային կարողությունը՝ դա նրա վարչական սահմաններում գործող առևտրային ընկերությունների, անհատ ձեռներեցների և ֆիզիկական անձանց տարեկան գործունեության արդյունքում ձևավորված օրենքով նախատեսված հարկատեսակների կամ դրանցից օրենքով նախատեսված չափերով մասհանումների, համայնքային բյուջեներին ամրագրված պետական տուրքերի, տեղական տուրքերի և դրանց հավասարեցված վճարների, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված «ա» մասով հատկացվող դոտացիայի հանրագումարն է:</p> <p>4. Ի դեպ, համայնքի եկամտային կարողության նշված սահմանումը միանգամայն առարկայական է դարձնում նաև հողված 2-ի 3-րդ կետում բերված «համայնքի եկամտային ունակության գործակից» հասկացությունը այն առումով, որ այլևս հասկանալի և կոնկրետ է դառնում «<< համանման ցուցանիշ» եզրույթը, քանի որ համայնքի եկամտային ունակության նախագծում բերված սահմանման պարագայում, երբ վերջինս պայմանավորված է նաև դոտացիաներով և տեղական բյուջեներին ամրագրված պետական տուրքերով, հասկանալի չէ, թե որ ցուցանիշը կարող է բնութագրել պետության եկամտային ունակությունը որպես << համարժեք ցուցանիշ: Համայնքի եկամտային կարողության առաջարկվող վերը բերված սահմանումը վերացնում է նշված անորոշությունը:</p> <p>5. 2.5 կետում համայնքի պարտադիր լիազորությունները կատարելու համար անհրաժեշտ ծախսերի ծավալը գնահատելու նպատակով սահմանվում է ծախսային կարիքի կարգավորիչ գործակից հասկացությունն, որպես նշված ծախսերի մեծությունը կանխորոշող մի շարք գործոնների «հանրագումար», իսկ 2.6 կետում շարադրված են այդ գործոնները:</p> <p>Նախ ակնհայտ է, որ համայնքային իշխանությունների պարտադիր լիազորությունների ծավալը պայմանավորված է գլխավորապես համայնքում կոմունալ-կենցաղային, տրանսպորտային և սոցիալական ենթակառուցվածքի առկայությամբ, ապա նոր նախագծում նշված գործոններով: Օրինակ, բնակչության միևնույն թվաքանակի, մասշտաբի կամ տրանսպորտի մատչելիության գործոնների պարագայում պարտադիր լիազորությունների կատարման ծախսերի ծավալը էապես կարող է տարբեր լինել՝ կախված այն բանից համայնքում կա մանկապարտեզ թե ոչ կամ համայնքում գործում է</p>	<p>է «սեփական լիազորություններ» բառերով:</p>
---	--

	<p>սպորտդպրոց կամ երաժշտական դպրոց թե ոչ, ինչ վիճակում է ջրամատակարարման ներհամայնքային ցանցը և այլն: Մինչդեռ նախագծի 2.6 կետում ներհամայնքային ենթակառուցվածքների առկայության ն դրանց արդիականության գնահատման գործոնները բացակայում են, ինչը կհանգեցնի ծախսային կարիքների թերագնահատմանը, հետևաբար և պետական ֆինանսական աջակցության անարդյունավետությանը:</p> <p>Ուստի, առաջարկում եմ նախագծի 2.6 կետում ավելացնել նոր գործոն՝ «համայնքում ապրելու նվազագույն պարտադիր պայմաններն ապահովող կոմունալ-կենցաղային, տրանսպորտային և սոցիալական ենթակառուցվածքների առկայության գործոն»:</p> <p>6. Առաջարկում եմ մշակել ներկա փուլում (օրինակ առաջիկա 15 տարիների համար) համայնքներում ապրելու պայմանների անխուսափելի և նվազագույն որակն ապահովելու համար անհրաժեշտ համայնքային պարտադիր ծառայությունների այն ցանկը, առանց որոնց իրականացման մեր քաղաքացին զրկված կլինի իր նյութական և ոչ նյութական այսօրյա պահանջարկված կարիքները բավարարելու տարրական հնարավորություններից, իսկ համայնքը կզրկվի բնականոն կյանքով ապրելու հնարավորությունից: Այնուհետև գնահատել (գույքագրել) վերը նշված ցանկում ընդգրկված ծառայությունների մատուցումը կազմակերպելու համար անհրաժեշտ ենթակառուցվածքների առկայությունը համայնքներում և կախված ներհամայնքային փաստացի կարողությունների առկայությունից սահմանել պարտադիր լիազորությունների կատարման համար ծախսային կարիքների գնահատման կարգ:</p> <p>Համայնքային կարողությունների գնահատման այս մոտեցումը հնարավորություն կտա նաև ձևավորել համայնքներում ապրելու պայմանների տեսակետից վերջիններիս համաչափ զարգացումն ապահովող առաջնահերթություններ և պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաներ տրամադրել այդ առաջնահերթությունների հիման վրա: Արդյունքում կձևավորվի համայնքների համաչափ զարգացումը ապահովող համայնքային ենթակառուցվածքների զարգացման նպատակային գործընթաց, ինչն իր</p>		
--	--	--	--

	<p>հերթին կձևավորի առկա ենթակառուցվածքների արդյունավետ օգտագործումը</p> <p>երաշխավորող պարտադիր լիազորությունների ծախսային կարիքների հիմնավորված պահանջարկ: Վերջինս կծառայի օբյեկտիվ հիմք պետական բյուջեից համայնքներին հատկացվող համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկման համար, ինչպես նաև համայնքների սեփական եկամուտների ավելացման նոր հնարավորությունների սահմանման համար:</p> <p>7. Ակնհայտ է, որ հայեցակարգային այս մոտեցման պարագայում անխուսափելի վերանայման կենթարկվեն նաև նախագծում ամրագրված ծախսային գործոնների ազդեցության կշիռները, որոնք բերված են 10.4 կետում:</p> <p>8. Մեկնաբանությունների այս համատեքստում վիճահարույց են ներկայանում համայնքի ծախսային կարիքների վրա ազդեցություն ունեցող 2.6 կետում բերված որոշ գործոններ: Օրինակ համոզիչ չէ տրանսպորտային մատչելիության գործոնի ուղղակի ազդեցությունը պարտադիր լիազորությունների մասով ծախսային անհրաժեշտությունների ձևավորման վրա (մի թե համայնքում պարտադիր լիազորությունների կատարման ծավալը ուղղակիորեն պայմանավորված է մայրաքաղաքից կամ մարզկենտրոնից ունեցած հեռավորությամբ կամ այդ կենտրոնների միջհամայնքային տրանսպորտի առկայությամբ, մինչդեռ ավելի կարևոր է միևնույն համայնքի կազմում առկա տարբեր բնակավայրերի միջև տրանսպորտային ենթակառուցվածքների և այդ բնակավայրերի ներքին կոմունալ կենցաղային և սոցիալական ենթակառուցվածքների առկայությունը):</p> <p>9. Նախագծի 2.7 կետը չի սահմանում «համահարթեցման սահմանային մակարդակ» հասկացությունը, այլ տալիս է թե ինչ նպատակով է օգտագործվում այդ ցուցանիշը: Ավելին նախագծի 7.5 կետում բերված բանաձևում օգտագործվում է ՀՍՄ-ն, բայց չի ներկայացված նրա հաշվարկման կամ որոշման որևէ բանաձև կամ մոտեցում: Այս անորոշությունը կասկածի տակ է դնում այն թեզը, որ պարտադիր լիազորությունների կատարման ծախսային կարիքների ապահովումը իրականացվելու է համահարթեցման դոտացիայի կիրառմամբ:</p> <p>Ակնհայտ է, որ համահարթեցման 100% մակարդակը ենթադրում է</p>		
--	--	--	--

	<p>պետական բյուջեից դոտացիայի այնպիսի ծավալի հատկացում, որը լրացնելով համայնքի սեփական եկամուտները կապահովեր համայնքային իշխանությունների կողմից պարտադիր լիազորությունների կատարման ծախսային կարիքները: Բայց համահարթեցման նման մակարդակը կոչել սահմանային՝ անտրամաբանական է: Հետևաբար, արդյո՞ք համահարթեցման սահմանային մակարդակի տակ նախագծի հեղինակները հնարավոր են համարում այնպիսի իրավիճակ, երբ պետական բյուջեից հատկացվող դոտացիաների գումարը, լրացնելով համայնքի սեփական միջոցները, այդուհանդերձ չի երաշխավորում պարտադիր լիազորությունների կատարման ծախսային կարիքների ամբողջական բավարարում նույնիսկ 2020 թվականից հետո: Եթե այս ենթադրությունը համապատասխանում է իրականությանը, ապա հարկավոր է անդրադառնալ համահարթեցման որակապես այլ հայեցակարգի: Առավել ևս, որ դրա համար մինչև 2020թ դեռ ժամանակ ունենք:</p> <p>10. Ֆինանսական համահարթեցման սկզբունքները սահմանող հոդված 3-ում ավելացնել 3.1 ենթակետ հետևյալ բովանդակությամբ.</p> <p>1. Տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով վերապահված պարտադիր լիազորությունների կատարման ապահովումը ֆինանսական ռեսուրսներով:</p> <p>11. Նախագծի 3.1 կետում «ֆինանսական հնարավորություններ» եզրույթը փոխարինել «եկամտային կարողություններ» եզրույթով (նախագծում չկա ֆինանսական հնարավորություններ հասկացության սահմանումը), իսկ «անհամաչափություն» բառը փոխարինել «տարբերություններ» բառով համապատասխանեցնելով 2.1 կետի սահմանմանը:</p> <p>12. Դոտացիաների «ա» մասի հաշվարկման կարգը սահմանող 6.2 կետում ամրագրված է, որ դոտացիայի այս մասի չափը սահմանվում է տվյալ տարվա պետական բյուջեով, սակայն չի ամրագրված թե ի՞նչ սկզբունքով կամ ո՞ր հաշվարկի հիման վրա է այդ չափը նախատեսվում: Այս հանգամանքը անորոշություն է առաջացնում ֆինանսական համահարթեցման համակարգի արդյունավետության հարցում:</p> <p>13. Հասկանալի չէ, թե ինչու՞ պետք է «բ» դոտացիայի գումարը</p>		
--	---	--	--

		<p>սահմանվի համայնքի բյուջետային ապահովվածության և համահարթեցման սահմանային մակարդակի տարբերության 75% -ի չափով:</p> <p>Վերը նշված հայեցակարգային բնույթի հարցադրումները պարզաբանելուց հետո միայն նպատակահարմար է անդրադառնալ նախագծի հոդվածներում բերված բանաձևերին:</p>		
2.	<p>ՀՀ կառավարություն</p>	<p>1. «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ 1/ 6-րդ հոդվածի 2-րդ մասում նշված օրենքը նշել չակերտների մեջ: 2/ 17-րդ հոդվածի՝ - 1-ին մասում նշված գերատեսչությունների անվանումների փոխարեն նախատեսել «լիազոր մարմին» ձևակերպումը: Վերոնշյալ մասի կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ նաև «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» ՀՀ օրենքի դրույթները, համաձայն որոնց սահմանված է կառավարության նոր կառուցվածք, որտեղ «Տրանսպորտի և կապի նախարարությունը» վերանվանվել է «Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության»: - 6-րդ մասում «պետական ֆինանսների» բառերից հետո լրացնել «կառավարման» բառը:</p> <p>2. «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի նախագծի 18-րդ հոդվածի 6-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի դրույթները խմբագրել՝ մասնավորապես՝ «հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից» բառերը փոխարինել «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերով:</p>	<p>Ընդունվել է:</p> <p>Ընդունվել է:</p> <p>Ընդունվել է:</p> <p>Ընդունվել է:</p>	<p>Կատարվել են համապատասխան փոփոխություններ</p> <p>Կատարվել են համապատասխան փոփոխություններ</p>

		<p>3. «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի նախագծի 18-րդ հոդվածի 7-րդ մասում և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածում նշել հղում արված իրավական ակտերի լրիվ անվանումները՝ մասնավորապես՝ օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, «Հայաստանի Հանրապետության» բառերը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը (այսուհետ՝ ընդունման օր), թիվը և «օրենք» բառը:</p> <p>4. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «լիազորված մարմին» բառերից առաջ լրացնել «պետական» բառը:</p>		<p>Կատարվել են համապատասխան փոփոխություններ</p> <p>Կատարվել են համապատասխան փոփոխություններ</p>
--	--	---	--	---